

Տ. ՆՈՎՆԱՆՆԵՍ ԱԲԵՂԱ ՄԱՅԻԼՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 հոկտեմբերի 2005 թ.)

«Ամէն ասեմ ձեզ. զի այրին այն փառաստեալ՝ շատ արկ քան զամենեսեան որ արկին ի զանձանակն, քանզի ամենեքին յաւերորդաց իրեանց արկին, այլ նա ի չքաւորութենէ իւրմէ զամենայն ինչ զոր ունէր արկ, գոյի չափ զկեանս իւր»:

(Մարկ. ԺԲ 43-44)

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելիներ, այսօր՝ Սուրբ Խաչից հետո հինգերորդ կիրակիին, Եկեղեցու Նայրերը Ս. Նով-հան Ոսկերեանից սկսած այս ընթերցվածն են կարգել որպէս Ճաշու ընթերցված Ս. Պա-րարագին ընթերցելու: Ահա վասիկ փեսնում ենք, որ մեր Տեր Նիսուս Քրիստոս Երուսաղեմ բարձրանալուց և փնտրիական ամբողջ խորհուրդը լրացնելուց առաջ օգտագործում է ամեն մի առիթ՝ փրկության խոսքը, փրկության ավերիսը փոխանցելու մարդկանց և նրանց սովորեցնելու ճշմարտության ճանապարհը: Եվ ահա վասիկ փաճարի մեջ կանգնած, զան-ձանակի առաջ, Նիսուս դիպում էր, թե ինչպէս յուրաքանչյուր ուխտավոր գալով իր լուծան էր ընծայաբերում փաճարին՝ լինի դա դրամ կամ որևիցէ ընծա:

Տերը փեսնում է, որ գալիս է նաև մի այրի կին, որը զանձանակի մեջ գցում է միայն երկու լուծա: Եվ Տերը, կանչելով իր աշակերտներին, ասում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքավոր այրին ավելի շատ գցեց զանձանակի մեջ, քան մյուս բոլոր դրամ գցողները, քանի որ ամենքը իրենց ավելորդից գցեցին, իսկ նա իր չքավորությունից, գցեց ամեն ինչ, որ ուներ՝ իր ամբողջ ապրուստը»:

Այսպէս Տերը ուղղակի առարկայական օրինակով է խոսում իր առաքյալների հետ, ուրիշ անգամներ առականերով խոսեց նրանց՝ առականերով փոխանցելով այն ճշմարտությունը, որ թաքնված է առակաների մեջ: Այսպէս Նիսուս ասում է, որ այդ այրի կինը ավելի շատ գցեց, քան մյուսները: Ի՞նչ է սա նշանակում, և ի՞նչ կարող ենք ուսանել այս դեպքից: Նարկավ՝ առաջին բանը, որ մեր մտքից անցնում է, դա զոհողությունն է: Ի՞նչ փեսակ զոհողություն, ինչպե՞ս մարդ կարող է հասկանալ զոհողությունը առանց ճշմարիտ հավատքի, առանց այն հավատքի, որ հիմնված է միայն ճշմարտության վրա, որ է՝ Քրիստոս: Այդ զոհողությունը, սիրելիներ, պահանջում է առաջին հերթին ճշմարիտ հավատք: Նավատը, իհարկէ, աստվածային շնորհ է, առաքիլություն, որ Աստված է մեզ պարգևում: Սակայն Աստված ընդառաջ է գնում մեր խնդրանքներին, ինչ որ խնդրում ենք մաքուր սրտով, ան-

կեղծ հավաքով, այն է, որ մեզ փոխանցում է, և ինչ որ մեր սիրտը փափագում է ուրիշներին անելու, այն է, որ մեզ փոխանցում է:

Այրի կնոջ այս ընծան չնչին բան էր, եթե առարկայական իմաստով վերցնենք, որպես դրամ, սակայն Տերը չգովեց նրա դրամի չափը, այլ նրա հոգով և սրտով մոտենալը փաճարին, նրա ամբողջ կեցվածքը փաճարի նկատմամբ, նրա հոգին ամբողջ, սիրտը, և թերևս ուրիշ անգամ լսել էր Քրիստոսի խոսքը, որ ասում էր. «Ով որ հեղինակում է Ինձ, պետք է թողնի ամեն բան, զա Իմ հեղինակ» կամ «պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ զորությամբ»:

Սիրելիներ, այրի կնոջ այս պարզ օրինակը, որի միջոցով Տերը մեզ փրկության խոսքն է փոխանցում մեր կյանքի, մեր կյանքի ամեն վայրկյանի, ամեն պարագայի, մենք հանդիպում ենք ոչ միշտ անպայման դրամի միջոցով. դա կարող է լինել սերը մեր մտերիմի նկատմամբ, դա կարող է լինել փարբեր Կոնստանտինոպոլի զոհողություններ, չբամբասելը մեր նմանին, այն ամենը, ինչ որ կա մեր կյանքի մեջ, ինչ որ կա մեր հասարակության մեջ, ինչ որ մարդ հավաքեց ունենալով, ճշմարիտ հավաքեց, Նիսիուսի և Սուրբ Եկեղեցու պապգամները կարող է իր կյանքի մեջ իրագործել, իրականություն դարձնել և օրինակ լինել նրանց, որոնք թերևս ամեն վայրկյան նայում են իրեն, իրենից օրինակ վերցնելու:

Քրիստոսի պապգամը բոլոր պարագաների մեջ մեկն է, ինչպես արդեն Նին Կոնստանտինոպոլի շեշտվում է այս խոսքը, այս նախադասությունը, որ «Սուրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ»: Այս սրբության ճանապարհն է Տերը մեզ ցույց տալիս փարբեր օրինակներով և ահա ևս մեկ օրինակով, այրի կնոջ այս լուծալով, այս ընծայաբերումով Տերը ցույց է տալիս ամբողջական զոհողության և նվիրաբերման իմաստը:

Սիրելիներ, հավաքե՛ք այս խորհուրդը, այս ճշմարտությունները մենք խոստովանում ենք և խոստանում ենք կատարել Սուրբ Մկրտության ժամանակ, երբ որ ի պատասխան քահանայի հարցումին, եթե մենք հասուն փարիքում ենք մկրտվում, իսկ եթե ոչ, կնքահորն հարցնում է քահանան՝ կնքահայր, ի՞նչ ես խնդրում, և կնքահայրը պատասխանում է՝ հավաքե՛ք, հույս, սեր և մկրտություն: Նավապքը, սիրելիներ, առանց ճշմարտության հավաքե՛ք, իսկ ո՛վ է այդ ճշմարտությունը: Այդ ճշմարտությունը անձնավորված Աստված է, այդ ճշմարտությունը մարդ դարձած Նիսիուս Քրիստոս է, Աստվածորդին է, որ Աստված ընծայաբերեց, չխնայեց Իր միածին Որդուն, ինչպես Նովիաննես ավետարանիչն է ասում, և նրան տվեց աշխարհի փրկության համար: Այդ հավաքե՛ք պարագլուխը Տերը Ինքն է:

Մենք մեր հավաքքը չենք կարող ոչ մի բանի վրա հիմնել, բացարձակապես ոչ մեկ բանի վրա, ոչ մեկ անձի վրա, ոչ մեկ եղելության վրա, բայց միայն այն ճշմարտության վրա, որ հենց Ինքն է՝ Նիսիուս Քրիստոս:

Այդ հավաքե՛ք իրագործողները, այդ հավաքքը կենդանություն դարձնողները բոլոր այն առաքելաշավիղ հայրերն են, այն սուրբերն են, այն նվիրյալներն են, ովքեր այդ հավաքքը իրականացրեցին, առարկայացրեցին իրենց կյանքի մեջ: Ընդամենը երեկ էր, որ մենք փոնեցինք Սուրբ Թարգմանիչների փոնը: Ի՞նչ էր, թերևս, Սուրբ Մեսրոպի արածը, եթե ոչ՝ այդ երկու լուծալի հավաքե՛ք չափը, ամբողջ սերն էր, ամբողջ նվիրումն էր, ամբողջ զոհողությունն էր, առաջինը՝ Տիրոջը, և երկրորդը՝ այն ազգին, որին նվիրաբերված էր, ընծայաբերված էր Քրիստոսի պապգամը փոխանցելու, հայացնելու, հայաշունչ դարձնելու:

Նարկավ, դեպքերի բերումով մարդ կարող է երբեմն սխալ գործել, մարդ կարող է հեռանալ այս երկու լուծայի չափի հավաքից, սակայն Աստված մեզ միշտ կանչում է, Աստված մեզ միշտ սիրում է: Ինքը սեր է, և այդ սիրով մեզ կանչում է ամեն անգամ Իր առջև կանգնելու և այդ կնոջ հավաքի չափ մեր ընծան մաքուր ցելու, լինի դա աղոթք, լինի դա ողորմություն, լինի դա պահք կամ որևիցե մեկ բան, որ Քրիստոս Ինքը սովորեցրեց, որ մեր հայրերը փոխանցեցին մեզ:

Ճշմարիտ զոհողությունը, հարկավ, ամեն պարագայի Աստվածորդին Ինքն է, որ բարձրացավ խաչը, սակայն չմնաց խաչի վրա, հարություն առավ և այդ հարությամբ մեզ բուրդաբանորդեց այնպեղ, ուր որ փափագն է յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի՝ հասնելու հավիտենական կյանք: Այդ հավաքն է, որ Քրիստոս յուրաքանչյուր մեկ պարագայի միջոցով, Իր կյանքի յուրաքանչյուր առիթով եկավ մեզ սովորեցնելու, թե ինչպես կարող ենք փրկվել:

Սիրելիներ, իմ մաղթանքն է, իմ աղոթքն է, որ Տերը ճշմարիտ հավաքի ճշմարիտ զոհողությունը պարզևի յուրաքանչյուր մեկիս, որ կարողանանք այն շնորհները, այն պարզևները, որ Աստված մեզ տվել է, գորացնենք և առավելով ընծայաբերենք Իրեն, չլինենք այն ծառայի նման, որ ընդունեց պարզև և տարավ-թաքցրեց: Ո՛հ: Այլ վերցնենք այդ պարզև և այն արդյունավորենք ու բազմապատկենք:

Ամենաթանկ բանը մարդու համար կյանքն է, որ երբևէ մարդը կարող է ընծայաբերել, և Քրիստոսից բացի, մեր հավաքի Պարագլուխից բացի ուրիշ մեկը չունենք ճշմարիտ առաջնորդ, որը կարող է հասցնել մեզ փրկությանը, ըղձացված և մեր կյանքի ողջ ընթացքում փափագված ճշմարտությանը: Մաղթանքս է, որ Տերը այդ զոհողության հավաքը, այրի կնոջ այդ երկու լուծայի հավաքը անպակաս դարձնի յուրաքանչյուր մեկիցս, որպեսզի ավելացնենք դա, գորացնենք և լինենք Քրիստոսի նման և կարարենք Քրիստոսի՝ մեզ պարզամամ գործերը:

Աղոթում եմ, որ Տերը մշտապես քաջառողջ և նվիրյալ ու ընծայաբերյալ պահի ամենքիս, և միշտ այրի կնոջ երկու լուծայի հավաքը ուղեկցող լինի մեր ողջ կյանքի ընթացքում:

«Շնորհք, սէր եւ աստուածային խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեւսեանս. ամէն»: